# ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ

Դեկտեմբերի 6-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Հունաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Իոաննիս Տաջիսին:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետն իր օրհնությունը բերեց նորանշանակ դեսպանին՝ արդյունավետ գործունեություն մաղթելով նոր պաշտոնում: Անդրադառնալով հայ-հունական հարաբերություններին՝ Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց, որ երկու երկրների համագործակցությունը բազմաճյուղ զարգանում եւ արդյունավորվում է՝ համահունչ երկու ժողովուրդների պատմական բազմադարյա հարաբերությունների ոգուն: Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ իր գնահատանքը հայտնեց դեսպանին՝ Հունաստանի իշխանությունների եւ դեսպանատան կողմից Հայոց Եկեղեցուն ցուցաբերվող աջակցության, ուշադրության եւ առանձնակի հարգանքի համար:

Դեսպանն իր հերթին վստահեցրեց, որ կանի ամենը՝ զորացնելու երկու երկրների ջերմ փոխհարաբերությունները՝ խարսխված պատմական արմատների վրա: Պրն. Ի. Տաջիսն անդրադարձավ նաեւ երկու ժողովուրդների պատմական առնչություններին, ընդգծեց նաեւ Քրիստոնեական Եկեղեցու կարեւոր դերակատարությունը ժողովուրդների կյանքում:

Հանդիպմանը խոսվեց նաեւ Հայ Առաքելական եւ Հույն Ուղղափառ Եկեղեցիների հարաբերությունների մասին, կարեւորվեց Հայ Եկեղեցու սպասավորների ուսումնառությունը Հունաստանի բարձրագույն աստվածաբանական հաստատություններում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ